

ԲԱԺԱՆՈՐՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
Տարեկան 10 ծր.
Վեցամսեայ 5 »

Արտասահմանի հա-
մար տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »

ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԷԼԻ
—(—
Կրոնքիւնի և չիկն տրուիր
—(—
Մանուգրակ տողը 20 սան-
քիւն է. երեքին աւելի աւե-
գաւններու համար 20 Օլօ
գեղջ կըլլայ:

ՇԱՐՇՈՒՄ

Նամակ և գրամ դրկի
Խմբագրութեան հասցիին

—


Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoun»
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)



1898

Տարակոյս չի կայ թէ եթէ ոչ մեր հայ-ազգային՝ գէթ միջազգային տեսակետով մեծ, հրաշալի եղաւ տարին որ վաղը մեզմէ հրաժեշտ առնելով աշխարհի պատմութեան մէջ էջ մըն ալ աւելցնելու կերթայ:

Մանր խնդիրներով ծանրաբեռուած, մտահոգ քայլերով մտաւ աշխարհ և մեկնած պահուն աւելի թեթեւ կը զգայ ինքզինքը: Իր նախորդները մէկէ աւելի կենսական խնդիրներու լուծումը յանձնարարած էին իրեն և ինք, ըրաւ ինչ որ կարելի էր, մնացեալը թողլով իր յաջորդին, որ ահա կուգայ լուծուողով, և զոր կողմնակցութեամբ բարախուն սրտով:

Ինչե՞ր պահուած կան այդ խորհրդաւոր պարկիկն ծոցին մէջ, ինչե՞ր: 1898 ի պարկիկը միայն վերջին րոպէին էր որ ցոյց տուաւ իր պահած թանկագին գոհարը, կրէտէի ազատութիւնը...

Բայց ապագան չի կանխել. ու անցեալին դառնանք:

Թեաւ իրոյ պարպուելու շրջանին էր որ հասաւ 98 տարին. և Սուլթանը երբէք չը պիտի մոռնայ այն պատրանքները, յուսախաջութիւնները, և պարտութիւնները որոնց ենթարկուեցաւ անոր օրով:

Նոյն սխալալուծեան զգացումը պէտք է փնտռել նաև Սպանիոյ սրտին մէջ: Արդարեւ այս երկու երկիրները կրօնքով այնքան հեռու մէկզմէկէ, բայց յոռի վարչութեան, կեղծքման գործերու մէջ զոյգ մը եղբայրներ են, և եղբոր պէս ձեռք ձեռքի տուած՝ օրէ օր գէպի անկում կը յառաջանան: Տարւոյն երկու ամենէն մեծ գէպերը եղան Գուպայի և յետոյ կրէտէի ազատումը: Այնքան տարիներու տղնութիւններէ, աբիւնյի զուլթիւններէ ետքը 1898 ի պարկիկին վերապահուած էր այս երկու քաջարի ազգերուն ճակատին՝ ազատութեան անթառամ

դափնիները հիւսելու փառքը: Ամերիկան ևս այս տարուան ընթացքին մէջն է որ մեծ ազգ մը ըլլալը գործնականապէս ապացուցուց. և իր սեմին վրայ գործուած վարարութիւններուն չի տոկալով, իր զաւակները զըրկեց մարդկային իրաւունքները պաշտպանելու. և աշխարհ արարատ ապշու թեամբ տեսաւ թէ Ուաշինկթընի հայրենիքը, դըրամի, առեւտուրի հայրենիք մը ըլլալէ աւելի՝ գիտութեան, կարեկցութեան, զոհողութեան և մարդասիրութեան հայրենիք մըն էր:

Ինչ որ ըրաւ Ամերիկան Փուպայի մէջ, նոյնը ըրին Եւրոպական շրջան մեծ պետութիւնները կրէտէի համար: Սուլթանին ամբողջ յոխորտանքը ջուր ինկաւ: Թուրք կառավարութեան սովորական բոլոր միջոցները՝ ջարդը, կողոպուտը նենգամիտ խոստումները, սպառնական ձեւաբանութիւններն անզօր մնացին. և թուրք զինուորները խայտառակաբար դուրս նետուեցան. մահիկը ոտնակոխ եղաւ. և քրիստոնէին ետ տրուեցաւ ինչ որ ժամանակաւորապէս յափշտակուած էր իրմէն: Սուլթանը միանգամ ընդ միշտ հասկցաւ թէ ոչ թէ ինք այլ եւրոպան էր ամենազօրաւորը. թէ ան կընէ ամէն ինչ որ հասունցած և յարմար դատէ. թէ Սուլթանին ըբռնած աստիճանով անհաշտելի չեն անոնց փոխադարձ շահերը, յօգուտ մարդկութեան՝ աշխարհի այս կամ այն կէտին վրայ համերաշխաբար գործելու համար:

Այս համոզումը, ի հարկէ մէկէ աւելի կատարի թափեր, վայրագ վճիռներ մեղմելու բնույթն ունի:

Տարւոյս նշանակելի գէպերէն մէկը եղաւ նաև Վիլհելմ Բ. ի ամբօթալի ճանապարհորդութիւնը, որ առանց իրական չարիք մը պատճառելու աշխարհի մնացեալ մասին, թուրքիոյ արդէն այնքան լիսիւ զանձեբուն մէջ խոշոր ծակ մըն ալ բանալու օգուտը տուաւ:

Փրանսայի ներքին խնդիրները ևս բաւականէն աւելի յուզեցին ամբողջ աշխարհի միտքերը: Զուլթի յանդուքն և անվեհեր քայլէն ետքը, Փրանսայի ներքին խնդիրները ևս բաւականէն աւելի յուզեցին ամբողջ աշխարհի միտքերը: Զուլթի յանդուքն և անվեհեր քայլէն ետքը, Փրանսայի ներքին խնդիրները ևս բաւականէն աւելի յուզեցին ամբողջ աշխարհի միտքերը:

Փրանսայի ներքին խնդիրները ևս բաւականէն աւելի յուզեցին ամբողջ աշխարհի միտքերը: Զուլթի յանդուքն և անվեհեր քայլէն ետքը, Փրանսայի ներքին խնդիրները ևս բաւականէն աւելի յուզեցին ամբողջ աշխարհի միտքերը: Զուլթի յանդուքն և անվեհեր քայլէն ետքը, Փրանսայի ներքին խնդիրները ևս բաւականէն աւելի յուզեցին ամբողջ աշխարհի միտքերը:

Փրանսայի ներքին խնդիրները ևս բաւականէն աւելի յուզեցին ամբողջ աշխարհի միտքերը: Զուլթի յանդուքն և անվեհեր քայլէն ետքը, Փրանսայի ներքին խնդիրները ևս բաւականէն աւելի յուզեցին ամբողջ աշխարհի միտքերը:

Փրանսայի ներքին խնդիրները ևս բաւականէն աւելի յուզեցին ամբողջ աշխարհի միտքերը: Զուլթի յանդուքն և անվեհեր քայլէն ետքը, Փրանսայի ներքին խնդիրները ևս բաւականէն աւելի յուզեցին ամբողջ աշխարհի միտքերը:

Փրանսայի ներքին խնդիրները ևս բաւականէն աւելի յուզեցին ամբողջ աշխարհի միտքերը: Զուլթի յանդուքն և անվեհեր քայլէն ետքը, Փրանսայի ներքին խնդիրները ևս բաւականէն աւելի յուզեցին ամբողջ աշխարհի միտքերը:

Փրանսայի ներքին խնդիրները ևս բաւականէն աւելի յուզեցին ամբողջ աշխարհի միտքերը: Զուլթի յանդուքն և անվեհեր քայլէն ետքը, Փրանսայի ներքին խնդիրները ևս բաւականէն աւելի յուզեցին ամբողջ աշխարհի միտքերը:

Փրանսայի ներքին խնդիրները ևս բաւականէն աւելի յուզեցին ամբողջ աշխարհի միտքերը: Զուլթի յանդուքն և անվեհեր քայլէն ետքը, Փրանսայի ներքին խնդիրները ևս բաւականէն աւելի յուզեցին ամբողջ աշխարհի միտքերը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Աղն Բաղնիս, 17 Դեկտ.

Տեղւոյս յոյն ազգաբնակչութիւնը անցեալ կիրակի օր խնդագին հանդէսով տօնեց կրէտէի ազատութիւնը: Եկեղեցւոյ մէջ գոհարանական աղօթքներէ յետոյ, որոնք վերջացան առաջին բազմութեան մը բռնու կեցցէներով հանդիսականները խոթեցին յարակից Ավէրօֆ վարժարանի հոյակապ սրահը, որ վայելչօրէն զարդարուած էր օրուան սխրալի հանդիսաւորութիւնը յատկանշող նշանակներով: Բեմին ճակատը Յունաստանի արքայական զոյգին նկարներէն վարձեցնական զինանշանի տակ կը փայլէր դաւար ստեղծող պատկուած լուսանկարը Երկիրս իշխանին՝ կրէտէի դարաւոր յոյսերուն իրագործման խորհրդանշանը այսուհետեւ. խիկ կողմնական պատերու վրայ կարգով յարուած էին Յունաստանի անկախութեան պատերազմին դրուագները ներկայացնող նկարներ, վսեմ համայնապատկեր ազատութեան ճանապարհի հանգրուաններուն:

Հանգէսը բացուեցաւ յունական քայլերով, զոր քառաձայն երգեցին վարժարանի աշակերտները և ապա իմ ելաւ Երկիրսի կրէտական եղբայրութեան մասնախմբի նախագահ Պ. Լիփիլիտիս, որ ընդհանուր ծափահարութեան մէջ թուեց պանծալի կզգիին ազատութեան համար եղած կիսադարեան ջանքերն ու մեծամեծ զոհողութիւնները և մասնախմբին գործունէութեան կարճատու համարատուութեան ետք՝ պերճախօս մաղթանքներով կնքեց իր ճառը: Յետոյ իրար յաջորդեցին կրետացի և տէղացի հինգ ճառախօսներ, որոնք բոլորն ալ մոլեցին ծափահարութիւն ու բարձրագոյն կեցցէներ խլեցին խանդավառ բազմութեան:

Զինակից ժողովուրդի մը յաղթանակը հռչակող այս սրտառոյզ հանդէսին մէջ հայերու թիւը քսանէն աւելի չէր, ասոնք ալ համեստ գաղթականներ միայն, որոնք փութացած էին իրենց հառաչանքով խառն մաղթանքները խառնելու յոյսերու գոռ ազգականներուն հետ: Միւթարական է սակայն որ միշտ մեր երեւելի գասակարգին այլեւս ամէն տեղ սովորական դարձած նողկալի անտարբերութեան հանդէպ գտնուեցաւ կազմակերպութիւն մը՝ հայ Յեղափոխական Դաշնակցութեան Աղեքսանսարիայի կոմիտէն՝ որու ներկայացուցիչներէն մէկը կարգաց ֆրանսերէն լեզուով ճառ մը որ բոլոր ունկնդիրներու համակրութեան արժանացաւ՝ եւ որ յաջորդ օր հրատա-

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԻՐ
—(—)

բակուելով տեղական բոլոր թերթերու մէջ, մեծ տպաւորութիւն յառաջ բերաւ :

Այս ճառին ի պատասխան Պ. Լիմի-րիտիս գեղեցիկ նամակ մը ուղղած էր Հայ Յեղ. Դաշնակցութեան կոմիտէին՝ որ նոյնպէս հրատարակուեցաւ տեղական թերթերու մէջ :

Կրէտէի ազատութեան եւ այս առթիւ երկու ժողովուրդներու միջև փոխանակուած սրտազին ցոյցերու առթիւ, տեղուս Րեֆորմ Ֆրանսական թերթը համակրական խմբագրական մը նուիրեց հայկական դատին :

ԿԱՐԻՉ

Յիւրիս, 20 Դեկտ.

Յիւրիսի հայութիւնը կը բաղկանայ 25 անձերէ, որոնց ինը ուսանող են : Անշուշտ այսպիսի փոքրաթիւ գաղութ մը ներկայացնել եւ իրմով զբաղեցնել հայ մամուլը : Յիւրիսէ ալ եկած անցած են ազգին անպատուաբեր եւ անհարգատ գաւակներէն բայց այժմ կը մնայ ուսանողներէ եւ գործաւորներէ կազմուած մաս մը, որոնց վարքը կրնայ պատիւ բերել ազգին : Ուսանողները, ազնիւ երիտասարդներ, սիրալիր կերպով կը վարուին իրենց հալածուած գործաւոր ազգակիցներուն հետ, գաղափարներ կը փոխանակեն անոնց հետ եւ այսպէսով ցոյց կուտան թէ ըմբռնած են իրենց բարձր կոչուած ժողովուրդին օգտակար ըլլալու զիրին մէջ : Այս շարքի առիթ ունեցանք երկու անգամ մեծամասնութեամբ խմբուելու :

Եւրոպական ծնունդի երկրորդ օրն էր, տեղացի հայասէր պատուական ծերունին, Հ. Շօլտըր Տէլէլայ հրաւիրեց հայրս ընտանեկան երեկոյթի մը : Ներկայ էին նաեւ հայերու համար կարեւոր գումարներ նուիրող բարերարուհին Օր. Օթ եւ գործաւոր հայերու գերմաներէնի ինքնակամ ուսուցչուհի Տիկին Պէնց : Այս զուգորդանակական երեկոյթին մէջ բարեմաղթութիւններ եւ շնորհակալութիւններ յայտնուեցան, «խորհուրդ մեծ» եւ մի քանի ազգային երգեր եր-

գուեցան : Կրփափաղիմ որ ամէն հայ ճանչնայ եւ գնահատէ այս պատկառելի ծերունին արժանիքը, որ վերջին տղաներէ հաջորդողն իր առողջութիւնը եւ հարստութիւնը հայոց համար : Ինքը գանձապահն է զուրիցերիական հայանպատա յանձնախմբին որ կը հողայ Վառնայի (.) Պրուսայի, Սերաստիոյ եւ Կրեմլինի մէջ բացուած որբանոցներու ծախսը, եւ նպատակներ բաշխած է աւերաւաքողաքներու մէջ : Հայր Շօլտըր կուլայ յիշելով հայոց կրած դժբախտութիւնները եւ փոխար կը գանուին նոյն իսկ մեր ազգին մէջ որ զգածուած ըլլան անոր չափ : Երկրորդ կլատսթոնն է ան հայերու համար, սա ասորբերութեամբ որ ինքը պետական անձ չէ, այլ պարզ գրամատէր մը :

ԿՐԻՉ

Կոստանտն, 20 Դեկտ.

Այսօր անդի ունեցաւ մեր նորակառոյց Հայկազեան վարժարանին բացման հանդէսը : Կրօնական ասանդալան արարողութենէն ետքը թաղական խորհրդոյ արեւնապետ Տ. Տ. Էմիրզեան, վարժարանին կառուցման ծախքերուն, ինչպէս նաեւ ի որհուրդին պաշտօնավարութեան ամփոփ տեղեկագիրը ներկայացուց հանդիսականներուն :

Յետոյ, թ. խորհրդոյ գործունեայ ատենագիրը, Տ. Լեւոն Սեղբոսեան, գեղեցիկ բանաստեղծութիւնով մը ներբարեց հանգուցեալ Տ. Ասատուածատուր Ֆրէնկեանի յիշատակը, որ 5,000 ֆրանքի գումար մը նուիրած էր այս նպատակին, եւ փափագ յայտնած վարժարանը ի հիմանց վերաշինելու եթէ սյգ զոհողութիւնը կրիսրու յօժարող ընկեր մը գտնուէր :

Այժմ, ուրխալի է որ հոգաբարձութեան ջանքերով եւ ֆէօստէնճէի ու շրջակայից ազգային-

ներու աջակցութեան շնորհիւ, գայրոցը վեհաշուք կը պանծայ Սեւ ծովու ափերուն վրայ : Մաղթենք որ Հայկազեան վարժարանին կրթական կացութիւնն ալ իր շէնքին չափ փայլուն եւ տոկուն ըլլայ :

Յաւալի է ըսել որ այս սիրուն հանդէսին բայակայ էին հայ եւրիտասարդութեան ամենէն վայլուն ներկայացուցիչներէն եւ ազգայիններէն շատերը :

Մտադրութիւն կայ մօտերս նորակառոյց վարժարանին սրբահաներէն մէկը լսարան. ընթերցարանի վերածել : Ահա գաղափար մը որուն ըրոյր ու ժողովրդ կը ծափահարենք եւ որուն իրականացման կը սպասենք անհամբեր :

Թղթակից

Կրայիս, 26 Դեկտ.

Ուրխալ եմ ծանուցանելու թէ վերջապէս տեղուս Հայկազեան ընթերցարանը բացուեցաւ : Նախապէս որոշուած տեղը անյարմար դատուելով, ընթերցարանը կը գտնուի այժմ հայ եկեղեցւոյ դէմը, Գալաթ փողոցին մէջ :

Բացումը տեղի ունեցաւ Տէր Ստեփան Հօր օրհնութիւններով : Հոգաբարձութիւնը կը քաջալերէ այս ձեռնարկը եւ մէկէ աւելի ազգին յառաջդիմութեան նախաձեռնող իր անձնու ամէն կերպով կօղնեն գործին յարատեւութիւնը ապահովելու համար :

Ընթերցարանին հիմնադրաց ժողովը անգրանիկ նիստ մը պիտի գումարէ վաղը, կանոնադիրը վաւերացնելու եւ գործադիր վարչութեան ընտրութեան ձեռնարկելու համար :

ԽԵՁՕ

—)(—

«ՎԱՂՈՒԱՆ ՁԱՅՆ»ԻՆ

(Կաղանդէի)

Չորրորդ անգամն է որ մեզի կը հասնի խումբ մը խելագարներու ուղեղին այս արտադրութիւնը :

Խելագար ըսի, բայց հաւասար իրաւունքով կրնայի աւելցնել նաեւ անպատկառ, իմաստակ եւ ասոնց բուր հոմանիշները իրենց գերազանցանքով, որովհետեւ այս կարգի որակականներու անբախդատի ներշնչարան մըն է Մանչեսթրի Ձաւնաթիւթը, Վաղուան... Ձախնչը : Իսկ եթէ արդարեւ խելագարներ չեն այդ թերթին յիմար էջերը ստորագրողները—ինչ որ բարեբախտաբար անյուսալի է—ուրիմն պէտք է ընդունի թէ մեր դէմը ունինք ամենէն իր բողոքները որոնց երբեք ծնունդ տուած ըլլայ հայտնորդ եւ արիւնը :

Արդէն, առաջին օրէն, իրենց համբաւուր «մենք» որ աշխարհիս մէկ ծայրէն միւսը այնքան շունդալից քա՛հ, քա՛հ մը առաջ բերու, խելոյն գուշակիլ տուած էր թէ ինչ աստիճան օգտակար կրնայ ըլլալ, իր թիւերը այդ պարզ յառաջադիմութեան հաւասարիմ, քունդուի գործն է գոր առաջ կը տանին. (վերականգնումը դեռ չեն սկսած) եւ այս եղիկները չեն գիտեր թէ թուր իսկ ինքզինքնին կը քանդեն, իրենց ուղեղին վերջին մասնիքներով, բարոյականով ու պատուով : Այնքան կատաղած են որ բան մը աչքերնուն չերեւար. ոչ իսկ իրենց լրբութիւնը. եւ իրենց կուրծքիս մէջ անստեղծաբար կը յայտարարեն. «մեր մտաւորական գերազանցութեան (.)» հպարտ գիտակցութիւնը... » սուկալու բան է :

Կերկայ հայութեան մէջ, կաթողիկոսն սկսեալ մինչեւ իրենց քաղաքին Տէրպապան ամէն բան քննադատելի ու քննելի է : Միայն մէկ անձ մը կայ որուն աստիճան մը կը խնայեն, իրեն բացառիկ յատկութիւններուն համար, Տօթթ. Կօյուեանը : Պատճառը անշուշտ կը հասկընաք :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (9)

ՀԱՅԻ ԳԻՆ

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԷ

ԺԶ.

Եկողները խնամակալութեան գրագիրն ու երկու պաշտօնեաներն էին : Գրագիրը, որ երիտասարդ մըն էր եւ Մարկոս աղային գործակատարը, սիգաճէմ քայուածքով կը յառաջանար, մէկ ձեռքով գաւազանը խողցընելով, եւ միւսով ալ պիտի որ լորելով : Ենթէն ներս մտնելով զըննողական նայուածք մը պտուտցուց բոլորտիքը, տիրական շնչով մը քանի մը հրամաններ տուաւ իր մօտը գտնուած պաշտօնեայիններուն, եւ զրասենեակին զուրը բանալով ներս մտաւ :

Աստղիկ իր անկիւնին մէջ կըմկուած մնացեալ էր. առտուան աս կանացի յարձակումը իր վրայ, վերիվայր յեղաշրջեալ էր զինքը. կը մտածէր թէ ինքը ինչո՞վ էր մեղաւոր, որ այդպէս հրապարակային խայտատառակութեան մատնուած էր, ու մէկը չէր մեղքացած զինքը : Փախչել,

փախչելու անիրաւ ամբոխին մէջէն, առաջին մտածումը եղաւ, բայց իր զաւակները կային անդին. եւ անոնց սիրոյն համար հարկաւոր էր մինչեւ ծայրը երթալ : Ուստի վախնալով որ երկրորդ յարձակում մը զինքը չարգիլէ, աճապարեց եւ գրասենեակը ուղղուեցաւ :

Պաշտօնեան զրանը բերանը կեցուց զինքը երեսնիվեր պրոտալով. —է՛ կնիկ, ի՞նչ է անձիկդ, թող էջէնտին քիչ մը չուրնչ առնէ :

—Ձեմ կրնար աւելի սպասել, պատասխանեց Աստղիկ, զաւակներս կը մեռնին կոր :

—է՛ ի՞նչ ընենք, մեռնին Անդուան ալ կը խալիս, մենք ալ, ըսաւ պաշտօնեան ամենայն պաղարիւնութեամբ :

—Անոն տղա, ատանկ մի ըսեր, ըսաւ Աստղիկ, մի շատցնէր ցաւերս, ալ քաջածա հերիք է, Անիլմ մը տուէք սուր ասնիմ :

Գրագիրը, որ հեռուն բազմոցի մը վրայ երկնցած, անհողութեամբ սիկար մը կոյրէր, ուշադրութիւն զարձուց զրան կողմը. եւ հարցուց պաշտօնեային : —Ո՞վ է ատ կնիկը նայիմ :

Պաշտօնեան Աստղիկի անունը հասկցաւ եւ իմացուց : Գրագիրը անմիջապէս ոտքի ցաթ-

կեց եւ Աստղիկի մօտենալով ըսաւ .

—Օ՛, կարելի բան չէ, քեզի համար բան մը չենք կրնար ընել :

—Ա՛խ, ես ի՞նչ ըրեր եմ որ ինծի ասանկ երեսի վրայ կը ձգէք, ինծի համար չէ որ կուզեմ, երկու զաւակ ունիմ, երկուքն ալ անթի են, հիւանդ են : Ես գանձեմ անհաւատներու ձեռքէն ազատեմ, հոս եմ բերեր, հիմա ինչպէս կը թողուք որ մեռնին, զուք հայ քրիստոնեայ չէ՞ք, մեղք է, վերը Աստուած կայ. ինծի սպաննեցէք, ծովը ձգեցէք, բայց զաւակներս խայտացէք :

Աստղիկ ծունկի եկած էր աչքերը, որոնց արցունքները սպտած էին ալ, խոշորցած, լայնցած, խենթի մը արտայայտութիւնը կուտային :

Գրագիրը, որ պաշտօնեայէն աւելի քաղաքավար եւ գիտասիրտ մէկը կերեւէր, Աստղիկի գիրքէն, խօսքերէն զգածուած պտտասխանեց : —Գուրիկս, մենք մեր գլխուն բան մը չենք կրնար ընել, մենք ալ ուրիշին հրամանին տակ ենք, եւ հրաման եղած է որ քեզի բան մը չիտանք :

—Որո՞ւ երթամ հիմա .

—Մարկոս աղային, աս գործին ան կը խառնուի :

Աս անունէն սարսուղ Աստղիկը .

—Ձէ՛, անոր չեմ երթար, ուրիշ

ն՞ով կայ :

—Պարագ բան է ուրիշին երթալը, Մարկոս աղան ինչ որ ուզէ ան կըլալ. Ա՛խ, աւելցուց գրագիրը քմիծաղով մը. Մարկոս աղան շատ բարի մարդ է, ամենէն կարճ ճանքան անոր երթալն է :

Աստղիկ զլուրը կախեց, բայց վայրկեանէ մը ետքը վեր առաւ, եւ ըսաւ .

—Ո՞ւր է Մարկոս աղան .

—Տուր կըլլայ .

—Տուր չեմ գիտեր .

—Պարոն կիրակոս, ըսաւ գրագիրը պաշտօնեային, սա խենթին ըսէ թող հոս գայ :

Պաշտօնեայն դուրս ելաւ, եւ երկու վայրկեան ետքը վերադարձաւ հնար ուրիշ մէկը առած :

—Անթի աղար. ըսաւ գրագիրը նորեկին, սա կնիկը առ եւ չիտակ Մարկոս աղային տունը տար :

—Շատ լա՛ւ, պատասխանեց խենթ պղբար ըսուածը, եւ Աստղիկի թեւէն բռնելով աւելցուց. Ե՛լ հեռա եկուր :

Աստղիկ առանց բոլորտիքը նայալու, առանց բան մը արտասանելու հետեւեցաւ անոր :

ՎԱՂԱՆ ՄԱՆՈՒԷԼԱՆ

(Շարունակելի)

Ապահովարար Ժամանակ է որ ականաւոր Զբախտարար Ժամանակ է որ ազգեցիկ մեթոտներով, որովհետեւ քանի մը ամիս ալ, եւ կատարելագոյն պիտի լինեն այդ Պարթեւեանները, Մարտիրոսները, Կիրակոսները, Սօթրիքները եւ խոմբին միւս բոլոր խելագարները:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Անցեալ անգամ կըսէինք թէ մենք մեր Հայրենիքը բաւական լաւ չենք ճանչնար:

Թերեւս ոմանք սաստիկութեամբ առարկեն թէ՛ ի՞նչպէս կարելի է ուղիղ ծանօթութիւն ու վիճակագրութիւն կազմել այնպիսի երկրի մը մասին, ուր տիրող օրէնքը քմահաճոյքն է, ու թրքական զաղիր քաղաքականութեամբ մէկ ակնթարթի մէջ չէն ու հարուստ հայ գիւղեր աւեր ու խոպան կրնան դառնալ, ու կամ թէ՛ շատ եկեղեցիներու և վանքերու կաթողիկէին վրայ խաչի տեղ իսլամական կեղտոտ նշանաբաններու նայ տեսնուիլ, ևն. ևն. Ըստ իս, այս ամէն առարկութիւն անտեղի է: Քանի մը տարիներ՝ Հայաստանի մէկ քանի քաղաքները ու ներքին գաւառները՝ թէ պաշտօնի բերմամբ ու թէ հետաքրքրութեամբ շրջելով ու ապրելով, ստուգած եմ որ, այդ կէտը նկարագրուածին չափ ձանձր չը պիտի լինէր, եթէ՛ այս օրինակին հետեւող ու քիչ շատ ձեռքնհասութիւն ունեցող մէկ քանի բանասէր հայրենագէտներու աշխատութիւնները գնահատուէին: Հատկապէս շատ բաներ գրուած ու նոյն իսկ տեղագրական կցկտուր հատորիկներ տրուուած են առանձին ուժերով: Սակայն հաւաքագոյն ու սխիւթման թիկ կերպով, նշանակութեան արժանի բան մը չենք կրցած յառաջ բերել: Քանի որ մեր մէջը, այս կարեւոր սեռը մշակելու հիմը, զօրաւոր կուսանի մը վրայ գրուած չէ: Հիմա դանք քանի մը ծանօթութիւններ գըրել, Մշոյ, Շատալու, Խոյթայ և Սասնոյ վրայ:

Մշոյ քաղաքը. — Թանձր ու խիտ առներով շինուած է Տարսի ստորին քղանցքի վրայ, որոյ մէկ կողմը գրաւիչ տեսարանով մը փռուած են անոր համբաւաւոր այգիները: Իսկ դիմացը Արեւելակողմը, կը բացուի Տարսոնոյ ընդարձակ դաշտի լայն հորիզոնը, իր շուրջ ու բոլորի նշանաւոր ու պատմական գիւղերով: Անի 1,200-1,500 տուն հայ և 2,500 տունի մօտ թիւրք և քիւրդ բնակիչներ: Հայերը ընդհանրապէս կապրէին առեւտուրով ու արհեստներով: Կային մի քանի բարեկեցիկ գերդաստաններ: Միջին դասն ալ գրեթէ իր ապրուստը հայթայթելու այնքան դժուարութիւն չէր քաշեր, որ-

չափ ա՛հն որ, մեծ մարդասպանի հայալինջ ծրագրերը՝ բացարձակօրէն գործարութեան չէր գրուած մեր աշխարհին մէջը:

Մշոյ հայու կեանքը՝ շատ պարզ ու միանգամայն զուարթ էր: Մանաւանդ նոյեմբերի վերջին՝ մինչեւ մեծ պահքի Ա. շաբաթը երբ Մշոյ համբաւաւոր կարմիր դիւնին, հողէ ահագին կարասներու մէջ հանելով, ուրախ Մշոյի սիրտը բանալու ու ընտանեկան անկեղծ ու անսեթեթ «քէֆ»ը ընելու միջոց կուտար: Տեսնելու արժանի էր այն անխառն ուրախութիւնը՝ ու պարզ խրատականքը, զոր մշոցի քաղաքացի հայը կընէր իր բարեկամական ու ընտանեկան շըրջանակի մէջը... Մշոյ հայ կրնը «նամէհրամ»ական ազտոտ սովորութեան բաւական ազատ իր հագած թանկագին ու փայլուն տարազով ու գլխուն ձգած զեղնագոյն «եղաձայնով» աւելի ևս գրաւիչ ընտանեկան ու ընկերական սեղանի ու խնձորի վարդէն էր: Այս ուրախ սեղանի շուրջ, երբ տեղական նեկտար գինին անհաշիւ կուգար իր գեղը կատարելու, գիւրդին է երեւակայել ուրախութեան շաբաթը երգերու, պարերու ու ծափերու հետ, որոնք՝ այդպիսի հանդիսաւոր օրերուն արարողութիւններն էին: 1880 Սեպ. առաջին եօթնեկէն էր՝ երբ առաջին անգամ մամիկոնէից այդ քաղաքը տեսնելու հաճոյքն վայելցրի: Կիրակի օր մը, քանի մը ընկերներով՝ Մշոյ սիրուն այգիները պտոյտի ու զբօսանքի գնացինք: Հիացումով դիտեցինք անհոգ ուրախութեան ու ցնծութեան այն ամէն տեսակները՝ որոնք Մշոյի հայու սիրական իրերն էին: Հոն՝ այդ զեղեցիկ այգիներու որթերի շուրջին տակ, խուճախով բազմած՝ իրենց հայրենի հողին վրայ, ազգային լեզուով կերպէին, կը խմէին ու կը պարէին: Այդ գրախտանման այգիներէն մէկուն մէջ, ուր չքնազուրկ ու ճաշակ տարբեր երեւոյթ մը ունէին, Տարսոնոյ առաջնորդ՝ Տ. Գրիգորիս Ե. Ալեքսանդրի պատուաւոր գերդաստատի մը ընդածիններով բազմած, տեղական սովորութեան համեմատ անխառն ուրախութիւն և խըրախմանք կընէին: Այն աստիճան անխառն որ, Սրբազան առաջնորդը՝ դեռ քիչ մը երիտասարդ, իր պաշտօնը մոռցած, «քէմը» մէկդի դրած, աշխարհականէ մը աւելի աշխոյժ, կը ջանար զգլխի ալ ուրախութիւնը իր չափազանցեալ եռանդով:

ՆԱՀԱ-ՊԵՏ

(Շարունակելի)

Ք Ր Ո Ն Ի Կ

Ռուսմանիոյ հայ պանդուխտներէն մէկը հետեւեալ խաբէութեան զոհ գացեր է: Պատմութեան նամակ մը կը ստանայ որմէ տեղեկանալով թէ իր որդին հայրենիքէն փախած և այդ քաղաքը ապաստանած է, իսկոյն 150 Քրանգի օգնութիւն մը կը զրկէ անոր: Քանի մը օր ետքը իր հայրենիքէն, Բաղեշի Ղուլթիկ գիւղէն ուրիշ նամակ մը կընդունի. որով, իր ընտանիքը, նիւթական ամենէն տագնապալի կացութեան մատնուած՝ գրամ կը խնդրէր: Նամակագիրը, այո անգամ բուն իսկ իր զաւակն էր, իսկ Պատմութեան գրողը յետին տեսակէ խաբէար մը, որ անխղճօրէն շահագործած էր հայրական սէրը և կարեկցութիւնը:

Պրայիլէն մեզ կը գրեն թէ վերջին երկու նաւերով Սուլինա գացող պանդուխտներուն մէկ մասը ազատ թողուեր է: Շոգեմանէն դուրս չի հանուածներուն մէջ բազմաթիւ թուրքեր ալ կան:

Անցեալ Դ. օր, առաւօտեան դէմ, Պոլսոյ մէջ երկրաշարժի բուն ցնցում մը զգացուեր է: Բերաի մէջ ցնցումը մասնաւոր սաստիկութիւն մը ունեցեր է: Մարդու կորուստ չիկայ, բայց բաւական թուով պատեր փլեր և շէնքեր ճեղքուեր են:

Հարաւային Ռուսիա բնակող յոյները 220,000 բուպի հաւաքելով իրենց Կրէտէի եղբայրներուն զրկեր են:

Վանէն կը գրեն. ամսոյս սկիզբը ձմեռը իր սառնաշունչ դունչը ցուցուց ձիւնով և ցուրտով, ի մեծ վիշտ չքաւոր դասակարգին, նա մանաւանդ շինական դասակարգին:

Եթէ քանի մը տարի ալ տեւէ գրամական ներկայ տագնապը, ալ խերը տես մեր հայ գիւղացիներուն. շատեր կաթովի պիտե դառնան: Անցեալները տեղւոյս ամերիկեան խնամակալութիւնը չիթ, կտաւ և ուրիշ զգեստեղէններ բաշխեց աղքատներուն:

Շուճուի քանի մը սոգայիններ գարձեալ բողբեր են Պատրիարքարան, Տ. Խորէն քահանայի ընթացքին դէմ:

Թիֆլիսէն կը գրեն թէ ռուս կառավարութիւնը, զպրոցներէ ետքը հիմակ ալ սկսեր է հայ գրագարան ընթերցարանները սեղմումներու ենթարկել:

Ռուսմանական խորհրդոյ ատենապետ Տօթթ. Թորգոմեան և պատրիարքարանի Ելիմտից տեւուչը Գ. կարգի Մէծիւիէի նշան ստացեր են:

Կաթողիկոսը գեկտ. 11ին այցելեր է Կովկասի կուսակալ Կալիցին իշխանին և մեծ համակրութեամբ ընդունուեր է անոր կողմէն: Տեսակցութիւնը տե-

ւեր է 40 վայրկեան: Կաթողիկոսին ընկերակցած էին Թիֆլիսի առաջնորդը և ուրիշ հոգեւորականներ:

Անցեալ շաբաթ առաւօտ, հին սովորութեան մը համաձայն, տեղւոյս ազգային վարժարանին մէջ զպրոցական սիրուն հանգես մը կատարուեցաւ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

ՀԱՊԱ ՄԻՒՄՆԵՐԸ . . .

Ահաւասիկ Բէթօրմի այն խումբագրականը որ յիշուած է մեր այս համարին Աղքատագրիոյ թղթակցութեան մէջ:

«Հայ մը որ ներկայ էր Աղքատագրիոյ կրէտագիրներուն՝ իրենց հայրենիքի փրկութեան առթիւ տուած հանդիսին, իսօք առաւ, իր ազգակիցներուն կողմէն ընդհանուր ուրախութեան մասնակցելու համար:

«Երանի՛ թէ, ըսաւ ան, այս փառաւոր կղզիին պատկերը մեծ ազգերու սիրտը շարժէր. և քրիստոնէական համբաւալութեան աղնի պարտականութիւններ ներշնչելու:

Ահա յոյս մը որ գուցէ ուշ կամ կանուխ պիտի իրականանայ:

Մեզ այնպէս թուեցաւ թէ այդ անանուն ձայնը, իրաւունք ունէր զուարթութեան գոչերուն մէջէն բարձրանալ, որովհետեւ կը յիշեցնէ այն համբաւալութիւնը, որ ժողովուրդները իրարու կը կցէ:

Դժբախտաբար մարդասիրական քաղաքականութիւնը իր նշանակութիւնը կորսնցուցած է մեր օրերուն մէջ. և, ազատութիւն, մարդասիրութիւն և արդարասիրութիւն բառերով չէ սր կարելի է այս օրուան կառավարութիւնները հրապուրել:

Հայերը, այդ մարտիրոսները միշտ թուրքերուն լուծին ներքեւն են: Երբեք չեն զերծ անցած ճնշումէ, կողոպուտէ, և տեսն ատեն ալ մեծ և փոքր ջարդերու ենթակայ են:

Ձոհերու գոչերը և գանգաւները խեղդելու համար, ամբողջ գրութիւն մը կազմակերպուած է, որ, վերջին աստիճանի կատարելագործուած է: Այնպիսի միջոցներով որոնք թէ՛ գործածողները և թէ՛ օգտուողները կանպատուեն, երկարատեւ լուսցուցին ամբողջ երկիրներու մասուլը:

Եւ երբոր գրամը պակսեցաւ, սկսան պատուանշաններ և աստիճաններ բաշխել:

Անթուլ, անդադար կը կոտորէին:

Եւ ի՞նչ, տակաւին հայեր կը գտնուին . . .

Լէտի Մաքայթի արեան արտադր միշտ կերեւայ՝ հակառակ ամէն լուսցումի, և ո՛չ բան մը պիտի կրնայ զայն ջնջել, միշտ կապրին հայերը, և Պոլսոյ ոս-

տիկանին զէնքը ու վայրագ բըր-
դին սուրը անկարող գոնուե-
ցան: Անոնք չեն անհետանար:

Ըմբռնելի է թէ կրէտայիները
կարողացան այնքան երկար տան
դիմադրել, հասկնալի է որ ցեղը
յաւերժացած ըլլայ այնքան կը-
սիւններէ և ջարդերէ ետքը:

Բայց թէ տակաւին հայու զաւակ-
նէր գտնուին, անաւասիկ տա-
րօքինակ երեւոյթ մը:

Կը թուի թէ այս երկարատեւ
մարտիրոսութեան մէջ, որովհե-
տեւ եթէ կրէտէի մէջ կոխ կար,
հոս՝ Հայաստանի մէջ պարզ
մարտիրոսութիւնը կը տիրէր—
երբեմն յուսոյ նշույններ կը զըտ-
նուին:

Կլատաթօնի պէս մարդ մը ու-
րուն փառքը անմահ է որովհե-
տեւ արդարութեան խօսքեր ար-
տաբերած է, Հայր Եւրոպայի պէս
անաքեալ մը, Վիքթօր Պէռուսի
պէս անձ մը որ վկայ մըն է, ատեն
ատեն կը խօսին: և այս արհա-
ւիրքներուն առջեւ շուարած
ազգերուն կըսեն, թէ ժողովուրդ-
մը կայ որ զարհուրելի հարստա-
հարսութեան մը ենթարկուած է,
մեռնողներու թուահամարը և զո-
հերու ցուցակները կը պատրաս-
տեն:

Յետոյ դարձեալ լռութիւն:
Միշտ հայեր կան:
Անոնք կը խօսին, տարա-
բախտները, ո՛չ միշտ ճարտար-
օրէն, որովհետեւ ամէն բան ի-
րե՛ց դէմ է: Բայց անոնք կա-
պացուցանեն աշխարհի թէ գո-
յութիւն ունի և այս՝ լաւագոյն
բօրօքականտան է:

Այս զանուեցաւ հայկական
փոփոխ մը շնորհաւորելու հա-
մարտէ կրէտայիները և անոնց հետ
գրեցին: «Կե՛ցցէ ազատ կրէտէն,
կե՛ցցէ ինքնութիւնը, կե՛ցցէ
արդարութեան համար մղուած
կռիւղը»:

Թո՛ղ հեղինակները չի մոռնան
այս դժբախտները և թող ճշն-
շուածներուն պաշտպան հանդի-
սանան: Խնդիրը ուրիշ բան չէ,
այլ միայն Եւրոպայի շահագրգռել
այս ժողովուրդներուն վիճակին:
Գործ մը՝ որուն կրնայ աշխատիլ
ամէն ազնուասիրտ անձ:

Թող չի մոռցուի նաև թէ
Թուրքիոյ մէջ կան մարդասէր
անհատներ, առաքինիներ, լոյ-
նի և առաջդիմութեան բարե-
կամներ, որոնք անիծեցին հը-
րամայուած և վարձատրուած
մարդասպանութիւնը:

Տիեզերական մեծ դաշնակ-
ցութիւն մը պէտք է հիմնել, և
ամէն երկիրներու մէջ, անձնուէր
անձեր անդադար գրեն ու խօ-
սին:

Արեւելից խաղաղութիւնը ա-
մենուն շահն է: Բաւական ըս-
ուեցաւ և կրկնուեցաւ մեզ այդ
բանը: Արդ՝ սոկուն և յարատեւ
խաղաղութիւն չի կայ այն տեղ
ուր մարդկային կեանքը յար-
գուած չէ:

Ձի մոռնանք երբեք դժբախտ-
ները. և այն օրը ուր ունէ տեղ
մը «կե՛ցցէ ազատութիւն»ը գո-
չեն, թո՛ղ մէկը գտնուի ըսելու
համար:

Հապա՞միւսները...

Պ. ԲՈՒՍՍՈՒՆ
Պոլսոյ ֆրանսական դեսպան
Պ. Բոնսթան մտաբեր իր պաշ-
տօնատեղին կը հասնի: Պ. Բոնս-
թան հնարամիտ մարդուն մէկն է,
այն որ ճարտար խաղով մը ներ-
քին գործոց նախարար եղած ա-
տեն Պրանսան փրկեց պուլան-
ժէականութեան փորձանքէն:
Դիտած էր թէ իր պաշտօնեա-
րէն մին՝ զօրավարին հաշտոյն
լրտեսութիւն կընէ և օրն օրին
կը տեղեկագրէ ներքին գործոց
նախարարութեան մէջ ըլլոր ան-
ցած դարձածները: Աստի Պ.
Բոնսթան իբր թէ ոստիկանա-
պետին ուղղուած հրահանգը
անհոգութեամբ մը բաց կը թողու-
նեղանին վրայ, այնպիսի կեր-
պով մը որ լրտեսը տեսնէր, ո-
րով կը պատուիրէր 24 ժամուան
մէջ Պուլանժէի ձերբակալումը
և այս ճիշդ այն օրը ուր Բարի-
զի խուժանը դիկտատորութեան
պիտի բարձրացնէր Պուլանժէն:
Չօրավարը որ բանտարկուելէ
շատ կը վախնար, նոյն գիշերն
իսկ Պրիւքսէլ փախաւ, որով
պուլանժէականութիւնը չուրը
ինչաւ:

ԿՐԷՏԷ
Քանի մը լրագրերը հաղորդե-
ցին թէ նուաճ Տրօլ մերձեր է
Կրէտէի վրա կառավարչութեան
պաշտօնը, որովհետեւ յունական
կառավարութիւնը մերժած է
իրեն վճարել 200,000 ֆրանկի
ուարեթոշակ մը:

Պ. Տրօլ զուլցերիական լրագ-
րաց մէջ կը յայտարարէ թէ այդ
մերժումը մէջ գրամական խըն-
դիրը և երբեք չունի: Մեր-
ժած է առաջարկուած պաշ-
տօնը որովհետեւ իրեն տրուած
իրաւասութիւնը անբաւական կը
գտնայ: Կը վախնայ որ մի գուցէ
Ենոկիոս իշխանին հետ կարծիքի
անբարեբախտութիւններու բաղխի:
Պարզ խորհրդակցանի դերը չու-
զեր ստանձնել, որովհետեւ
վերջապէս զինքը պատասխանա-
ւոր կը թողու:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ
Պուլէն կը հեռագրեն թէ Գուռը
դարձեալ հրամայեր է էտիր-
նէի ամբողջութիւնները զօրացնելու
և մեծցնելու:

— Ըսած էինք արդէն թէ քանի
մը գերման գրամատէրներ կը
փափագին Պաղեստինի և Սուրիոյ
մէջ ընդարձակ հողեր գնել գեր-
ման երկրագործական դաղութի
մը վերածելու համար: Այս ար-
տօնութեան փոխարէն Թուրքիոյ
մեծամեծ փոխառութիւնները ը-
նել կը խոստանան. բայց այն
պայմանով որ Թուրքիա բնաւ ի-

րաւունք չունենայ այդ գաղու-
թին վարչութեան միջամտելու
կամ պաշտօնեաներ անուանելու:
Դաղթականութիւնը պիտի կա-
ռավարուի խորհուրդէ մը՝ նոյն
իսկ գաղթականութեան անդամ-
ներուն կողմէն ընտրուած:

— Իդմիրէն Տիւրքը Ղարիպեան
և Բաւլիաէս Թուրքը կառավարու-
թենէն երկրին բեգրօլի ամբողջ
վաճառականութեան մենաշնոր-
հը խնդրեր են:

— Պուլական թղթակցութիւն
մը, զոր պիտի հրատարակենք
գալ համարով, մեզ կիմացնէ թէ
Թուրք ոստիկանութիւնը օրոշեր
է, ազգային ծանօթ ուսուցիչնե-
րէն Պ. Մելքոն Կիւրճեանը Թու-
րքաւ զրկել իբրեւ աքսոր:

— Պուլական տասն և մէկ
քաղաքներու մէջ, Սլիվէն, Քը-
լանլըք, Թրօեան և այլն, դար-
ձեալ հակակառավարական մի-
թիւններ կազմուած են, որոնք
արդի նախարարութեան անկու-
մը կը խնդրեն:

— Բարիզի Վճռաբեկ Ատեանի
եղեռնադատ ճիւղը կոչնագիր
մը զրկեր է հրամանատար էո-
թէրհաղիի. յունվար 12ին դա-
տարան ներկայանալու:

— Ամերիկեան ձերբակոյտը
սկսած է հաշտութեան դաշնա-
գրերն քննութեան խնդրով
զբաղիլ:
Կառավարութիւնը օրոշեր է
Ֆիլիպպեաններու ինքնօրէնու-
թիւն տալ, եթէ ատենք կամո-
վին հնազանդին:

— Մատրիտէ կը ծանուցանեն թէ
ապտամբները Մալապանի սպա-
նիացիները բոլորովին ջարդեր
են:

— Սպանիոյ նախարարացեալը
որ ծանր կերպով հիւանդ էր,
սպաքինած և իր պաշտօնին զը-
լուարը անցած է:

— Նիւ-Նորթ, մէջ ինֆլուէն-
ցաի համաճարակը այնքան սաստ-
կացեր է որ թատրոններէն,
դպրոցներէն և զբօսարաններէն
շատերը ստիպուել են իրենց
զուներ փակել:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Սերառաիոյ Եարհիսար գիւղէն
Տօնիկեան Նշան անուն 27 տա-
րեկօն երիտասարդը, Պոլսոյ
զէպքէն Եւրոպա անցած է: Տե-
ղեկութիւն ունեցողներէն կը
խնդրուի որ յիշխալին հասցէն
իմաց տան «Նարժում»ի խմբա-
գրութեան:

Շ Ն Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Մեր շնորհակալութիւնը կը
յայտնենք այն բաժանորդնե-
րուն, որոնք, թէեւ քիչ մը ուշ
և սակայն մեր վերջին գեկոյցին
վրայ, փութացին իրենց պարտքը
ճանչնալ:

Նոյնը ընել կը յանձնարարենք
նաև անոնց՝ որոնք գեռ կը
դանդաղին, անգամ մըն ալ յայ-
տարարելով թէ՛ հակառակ պա-
րագային ծագելիք անպատեհ հու-
թեանց պատասխանատու չէ խըմ-
բագրութիւնս:

—)(—

ՎԱՐՊՈ
ԵՐԿՈՒ ՍԷՐ
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ)
)(Գին 1 Ֆրանկ)

Մնացած սակաւթիւ օրինակները
կը ծախուին վաճառի մէջ Եւրոպայի
խմբագրատունը, Ֆիլիպպէ՝ Տ. Անտոն
Կոչի մօտ. Թուրքիոյ՝ Հայկ Մալախ-
եանի սրճարանը:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Տէր Ղեւոնդ Ք. Փափազեանի
հայերէն—ռուսերէն տարի-
ցոյցը, պատկերազարդ և ճոխ
պարունակութեամբ. Գինն է
թղթակազմին 1 ֆր. լաթա-
կազմին 1.50 և փառակազմին
2 ֆր.:
Գիմել հեղինակին, Կալաց:

ՈՒՅԱՊՈՒԹԻՒՆ

Եթէ կուզէք հագնել կօ-
շիկներ որոնք իրենց վրայ
միացուեն ձեզի եւ դիմաց-
կունութեան կտտարելու-
թիւն եւ մանաւանդ գինի չափա-
րութիւն, առանց վարանելու գիմե-
ցէք Ստեփան Խորասանեանի, Մու-
սալլա, բաղնիք փողոց, հաճի Հասան
էֆէնտի օթելին տակ. հաւատացէք
որ առիթէն պիտի օգտուիք:



ԽՄԱԿՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐՃՈՒՄ»-Ի

Կը տպագրուին ամէն լեզուէ
այցետուն, հասցետուն, նամա-
կազուլա, հարսանեկան հրաւի-
րագիր, մահալագ, ինչպէս նաև
պրօշուրներ:

Գիներն յոյժ գեղարամատչելի:
Ուրիշ քաղաքներէ եկած
յանձնարարութիւններ ճշու-
թեամբ և փութով կը կատար-
ուին:

ՏՊԱՐԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ
Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ
Վ.Ա.ՈՒՍԱ
Սեկուրդ քաղ, Շիրքեխաֆ փողոց.
Ստալլը 26օտի կից.

Կը տպագրուին հայերէն, պուլկարե-
րէն, գաղղիերէն, յունարէն, անգլիերէն,
և այլ լեզուներով պոլիտուն, հասցե-
տուն, հարսանեկան հրաւիրագիր, ազ-
գարարութիւն, նամակազուլա, պահա-
րան, մահալագ, վաճառականական ամէն
տեսակ գործեր, գիրք, լրագրեր, և այլն:

Գուճաւոր եւ ոսկեգօծ զարդագործ-
րու համար ամէն լեզուէ ճոխ տառեր եւ
մասնաւոր գործիներ կը գտնուի:

ՄԵՏ ԽԵԱՄԳ ԵՒ ՄԱԲՐՈՒԹԻՒՆ
ԳԻՆԵՐԸ ՅՈՑԹ ԳԻՒՐԱՄԱՏՅԵԼԻ

Ուրիշ գործեր եւ յանձնարարութեան
եւ հարսանեկան և փութով և արագ:

Отговорникъ: А. СУКЯСОВЪ.

Печатница „Взаимность“, Варна